ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար **Էդգար Էդիկի Ալեքսանյանի** «Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրները կոալիցիոն կառավարության պայմաններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Էդգար Ալեքսանյանի ատենախոսության թեման **արդիական է**, որովհետև Հայաստանում, սահմանադրական բարեփոխումներին հաջորդած քաղաքական գործընթացները խիստ անհրաժեշտ են դարձնում քաղաքական կուսակցական համակարգի գիտական, իրավաքաղաքական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գործառնման շրջանակներում: Կուսակցական համակարգի կայացման և կատարելագործման գործընթացը ժողովրդավարության ձևավորման և կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն են դառնում քաղաքական կուսակցությունները: Նման վերլուծությունը կարևոր ու արդիական է նաև պետության քաղաքական զարգացման ուղենիշներն ու կողմնորոշման առանձնահատկությունները վերհանելու և հետագա զարգացման հեռանկարներն ուրվագծելու տեսանկյունից: Խորհրդարանական կառավարման անցման գործընթացը ներկայումս թևակոխել է զարգացման նոր փուլ և բնականաբար ժողովրդավարական հարաբերությունների թարմացման շրջանը համընկավ նաև ներքաղաքական տեղաշարժերի, թավշյա հեղափոխության և իշխանափոխության հետ, ինչն անհրաժեշտ է դարձնում կուսակցական համակարգի կատարելագործման թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը: Ժամանակակից քաղաքական գործընթացներում քաղաքացիների ակտիվ մասնակցության ձևերի նշանակության աճով պայմանավորված արդիական են հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Համաձայն ենք հեղինակի այն պնդման հետ, որ արդի հայ

հասարակության կերպափոխման բազմաչափ գործընթացն արդիականացրել է կոալիցիոն համագործակցության և կոալիցիոն կառավարությունների ձևավորման հիմնախնդիրները: Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում տեղի ունեցող կերպափոխումները վկայում են, որ կոալիցիոն կառավարությունների օգնությամբ արմատական փոփոխությունների մեջ գտնվող երկրները, նպատակամետ իրականացնելով արդյունքի կառավարում, առավել արագ են հաղթահարում քաղաքական զարգացման ճգնաժամերը:

Ատենախոսության նպատակները՝ **գիտական են**: Ատենախոսը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է կոալիցիոն կառավարությունների օրինակները՝ որպես մարգինալ իրավիճակային արդիականացման գործընթացի հետևանք, բացահայտել է բաց և փակ համակարգերում կուսակցական կոալիցիաների գործառման առանձնահատկությունները, լուսաբանել է կառավարության փոփոխությունների ռազմավարական սկզբունքները գծային ազատականացման իրավիճակում: Հանգամանալից հետազոտվել են կոալիցիոն կառավարության և կուսակցական համակարգի զարգացման փոխպայմանավորվածությունը՝ որպես ժողովրդավարական անցումից համախմբման, ինչպես նաև ժողովրդավարության որակի և համագործակցության մշակույթի գործառման գործընթաց: Հեղինակը կարողացել է ներկայացնել քաղաքական և հասարակական դիսկուրսը կուսակցական համակարգի բնականոն զարգացման գործընթացի մասին:

Հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել ժողովրդավարական անցման գործընթացում գտնվող երկրներում կուսակցական համակարգերի և կուսակցությունների ինստիտուցիոնալ տիրույթներում՝ որպես կոալիցիոն համագործակցության գործառման գերակա պայման: Միաժամանակ, կիրառելիության տեսանկյունից հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել ՀՀ-ում կոալիցիոն համագործակցության զարգացման առումով: Այդ նպատակով ներկայացված և շրջանառված են «կոալիցիոն շարունակական ժողովրդավարություն», «հասարակական համակարգի ցանցային կերպափոխում», «կոալիցիոն մշակույթ», «կոալիցիոն կառավարության էկոլոգիա» եզրույթները: Աշխատանքը արժևորվում է նաև նրանով, որ կատարված վերլուծությունը փորձագետներին և հանրային քաղաքականության, ինչպես նաև կոալիցիոն կառավարության արդյունք ապահովող պատասխանատու դերակատարներին

հնարավորություն կտա հարստացնել իրենց մասնագիտական ունակությունները՝ մշակելով կոալիցիոն կառավարության խաղային գործելակերպի ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման գործելակերպի ռազմավարություն:

Բազմակողմանի տեսական մոտեցումների կիրառմամբ հեղինակը հստակեցրել է քաղաքական կոալիցիաների չափորոշիչները, կարևորել է դրանց կիրարկումը ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման գործընթացում: Գաղտնիք չէ, որ բազմաթիվ ընդհանուր գծերի հետ զուգահեռ յուրաքանչյուր երկիր ունի քաղաքական համակարգի իր ուրույն առանձնահատկությունները: Այս առումով ես գնահատում եմ հեղինակի կողմից Հայաստանում կուսակցական կոալիցիաների առանձնահատկությունների բացահայտումն ու հասարակական-քաղաքական կյանքում դրանց արդիականացման հիմնախնդրի հետազոտությունը, որն էլ հնարավորություն է տվել նաև առանձնացնել կոալիցիաներին մասնակցության ինստիտուցիոնալ հիմնախնդիրները:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը գիտական նորույթի առկայությունն է: **Գիտական նորույթը առկա է**: Առաջադրվել են կուսակցական կոալիցիաների որոշակի նոր մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք ներառում են այդ դաշտը կարգավորող իրավական-կազմակերպչական և օրենսդրական աշխատանքները: Ատենախոսին հաջողվել է կոնկրետացնել իր ուսումնասիրության նպատակային լուծումները, հետազոտության հիմնախնդիրը հիմնավորվել է որպես ժողովրդավարական համախմբման կարևոր նախադրյալ:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են թեմայի ուսումնասիրության հետ կապված տեսական հիմքերն ու հիմնական աղբյուրները, ընդհանրացնող աշխատություններ, գիտական մենագրություններ, հրապարակված փաստաթղթեր: Հայաստանի և արտերկրի գիտական դիսկուրսում թեմային առընչվող քաղաքական գործընթացների շուրջ առկա մոտեցումների ուսումնասիրման նպատակով օգտագործվել են տարբեր երկրների գիտական վերլուծական հաստատությունների և ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների հետազոտական նյութերը:

Ատենախոսության մեջ առկա են նաև որոշակի թերություններ, կան բացթողումներ որոնցից ցանկանում ենք նշել հետևյալները

- Ատենախոսության առաջին գլխի առաջին ենթահարցը, որը վերնագրված է «Սոցիալական և քաղաքական համակարգերի համագործակցության բազմաչափությունը», մեր կարծիքով որոշակի շեղում է թեմայից և առանձնակի կապ չունի ատենախոսության թեմայի հետ:
- Հետազոտությունն արված է Հայաստանի Հանրապետության օրինակով և ինչպես ենթավերնագրերում և բուն տեքստում բազմիցս և անընդհատ է նշված ժողովրդավարական համախմբման փուլում: Անկախության հռչակումից ի վեր անընդհատ խոսվում էր այդ ժողովրդավարական համախմբման (կոնսոլիդացիայի) մասին: Բայց այդպես էլ գիտական առումով մինչև օրս չի հսատակեցվել այդ գործընթացը ի վերջո ավարտվեց, ընթացքի մեջ է, ներկան ինչպես կարող ենք բնութագրել: Կա նաև գիտական տեսակետ, որ ժողովրդավարական համախմբումը արհեստածին հասկացություն է: Ատենախոսությունը կշահեր եթե հեղինակն այդ զուտ տեսա-մեթոդաբանական հարցադրումների փոխարեն ավելի մեծ տեղ հատկացներ կուսակցական կոալիցիաների կազմման, գործունեության և անհաջող լուծարումների գործընթացի պատճառներին և հետևանքներին, որն ավելի կհամապատասխաներ ատենախոսության մասնագիտությանը:
- Հայաստանի առաջին հանրապետության կոալիցիոն կառավարության փորձառությունը իհարկե կարևոր է հիմնախնդրի պատմության ուսումնասիրության առումով, բայց այն արդի քաղաքական իրողություններում կիրառական նշանակություն գրեթե չունի:

Մեր դիտարկմամբ, վերը նշված դիտողությունները էականորեն չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պետք է առավելագույնս զարգացնել կոալիցիաների ինստիտուտը: Այս առումով հիմնավորված է Հայաստանը ժողովրդավարական զարգացած երկրների քաղաքական ու իրավական համակարգերին

ու եվրոպական չափանիշներին մոտեցնելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կարող է նպաստել ժողովրդավար երկրների հետ գործակցային հարաբերությունների զարգացմանը: Այս և մյուս եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ ներքին քաղաքական հայեցակարգի առանձին դրույթների մշակման և նաև պետության քաղաքական դիրքորոշումների պարզեցման համար:

Ատենախոսության բոլոր հատվածներումում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան եզրահանգումներն ու սկզբունքային հիմնադրույթները հայեցակարգային բնույթի են:

Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից գտնում եմ, որ ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար **Էդգար Էդիկի Ալեքսանյանի** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ---------- Գ. Քեռյան

Քաղաքական գիտ. դոկտոր Գ. Մ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ
Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար, բանասիրական գիտ. թեկնածու Մ. Հովհաննիսյան

ք. Երևան **08.12.2023 թ.**